

## ԱՐՏԱՍԱՅՄԱՆԵԱՆ ՔՐՈՆԻԿ

ՀԽԻՍԻՈՍՑԻՆ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՄԻԱՑԵԱՆ. ՆԱՀԱՆԳՆԵՐԸ ԵՒ ԺԱՄԱՆԱԿԱԿՑԻՑ ԱՄԵՐԻԿԱՑԻՔ<sup>1)</sup>:

Այս մերիկանալուն նպաստող հանգամանքները. Ամերիկացիների առանձնականութիւնները. Ամերիկական նախաձեռնող ոգին. Դասակարգերի բացակալութիւնը. Ամերիկացու անկախութիւնը. Ամերիկացու սկզբունքը. Ամերիկացու կարծիքը և նրապատճեան առիթով:

### II

Ընթերցողը արդէն ճանաչում է թէ ինչ տարբերից են կազմած ամերիկական գաղղթականները.

Արդ՝ ինչ պատճառների շնորհիւ են դրանք կերպարանավոխուում և դառնում զուտ և անկիններու, ամերիկացիներու.

Առաջին պատճառը պէտք է համարել բնութեան ազդեցութիւնը, ամերիկական կլիմավի ներգործութիւնը, կլիմավի՝ որին լատուկ է էլեքտրականութեան առատութիւնը, օդի չորութիւնը. Նւ ակ անհշմարելի ներգործութեան հետեանքը երեսում է մի քանի սերունդներից կետու երբ մարդուս մարմինը աւելի նրբանում է, զանգը աւելի երկարանում, ձեռները բարակում, ջղակին դրութիւնը ձգուած, դիւրազգացութիւնը գրգռուած և կենսականութիւնը սաստկանում:

Բաց ամելի նշանաւոր և ամելի զօրեղ պատճառը է մարդկալին միջավակը չնալած ակն հանգամանքին, որ ամերիկական առանձնալատկութիւնները չեն կազմում դեռ մի ցեղի ուրունութիւնը<sup>2)</sup> և սորա ապացուցը ակն է՝ որ գաղղթականը ամելի արագ դառնում է ամերիկացի քան թէ մի Փրանսիացի—անգլիացի զանար (չէ որ ակ երկու ցեղերի առանձնալատկութիւնները ամելի բարդ են). Խնչպէս որ գաւառացին զառնում է քա-

1) Տես «Մուրճ» 1893 թ., № 5.

2) =originalité, оригинальность.

զաքացի—գրեթէ նոյն կերպով և գաղթականը դառնում է ամերիկացի: Ալս նոր մթնոլորտի մէջ նա ժամանակ չոհի զբաղելու իւր դրացու շարժումներով, հաշվի առնելու հասարակաց կարծիքը Նրջապատաժ լինելով աւելի բազմազան հասարակութեամբ և գործելու աւելի լախ ասպարէզ ունենալով՝ բնական է որ նա աւելի շատ զաղափարներ է փոխ առնում և ենթարկում շրջապատող մթնոլորտի աւելի զօրեղ և աւելի ներդորական հորձանքին, Նրա մի քանի խտկութիւնները աւելի են որոշում, աւելի սրտում և նա քշում է տանւում ընդհանուրի հոսանքով: Ալս միջավայրի մէջ ընկնողը սկսում է մտածել աւելի շատ և աւելի արագ, մարդու դէմքը դառնում է աւելի արտավայրիչ և աւելի շատ ձգտող դէպի կեանքը:

Ամերիկակում կարծես կտրտում են ախ արմատները, որոնցով դադթականը կապւած է եղել իր բնիկ երկրի հողի հետ: Մտաբերեցէք եւրոպական տիպերը և նախեցէք ախտեղ, Ամերիկալում, տասներկու տարեկան երեխալի վրա, որը շահեցնում է իւր դրամը, որը լրագիր է հիմնում, նախեցէք Պիտուրուրդի, Ֆիլադելֆիաի ախ բանւորին, որը չօժարւում է օրական Յ դոլլար ստանալ մի մեքենալի հսկելու համար «մինչև իւր՝ Հանրապետութեան նախագահ՝ դառնալը», նախեցէք ախ ամերիկացուն, որը՝ ասոր կառւրու<sup>1)</sup> լինելով մի ռանչմանի մօտ, կամ ծառակ մի ֆերմերի մօտ՝ ոչ թէ բնական միս է գործածում, ալլ կտրտած, պաղցրածը՝ ուղղակի Գիկագուց եկածը, և որը մի ախալիսի տան մէջ է կենում, որի մասերը նա ստացել է երկաթուղով. վաղը դուք ալդ ամերիկացուն մեքենավար դառած կը տեսնէք, կամ չմի նորաստեղծ քաղաքի քաղաքացի, որը պատրաստ կը լինի մեղ ծախել իւր իրաւունքի տակ եղած հողը և չել մի ալլ տեղ իւր փոխազրուղ տան հետ միասին:

Եւ ամեն բանում ամերիկացին աւելի անկախ է քան եւրոպացին կապւած չը լինելով ոչ հողի հետ, ոչ էլ հասարակական կաստաներին:

Նոյն իսկ իւր արտաքինում ամերիկացին չի պահպանում եւրոպացու խստութիւնը—լինի դա իրան պահելու ձեզ, հազնւելը, ճաշելը, նոյն անկախութիւնը նկատում է և բարուականի մէջ, ամերիկացին նոյնքան հեշտութեամբ դնահատում է և անդիւցու հանճարը, և ֆրանսիացունը, և գերմանացունը՝ զուրկ լինելով ալս երեքի նեղ հակեցողութիւնից:

Մինչդեռ եւրոպացին ծնւելով տեսնում է արդէն պատրաստ շրջանակներ, որոնց մէջ մտնելով՝ նա մնում է ամբողջ իւր կեանքի ընթացքում—եթէ նա աղքատ է՝ աղքատ, եթէ հարուստ է՝ հարուստ, լամենախ դէպի՝ քսան տարեկան հասակում նա ընտրում է իրա համար մի կարիերա, որի մէջ և կնքում է իւր կեանքը՝ մնալով անփոփոխ՝ արմաստոր կամ վաճառական, պրոֆեսոր կամ բժիշկ, պաշտօնեալ կամ զինւորական... Խակ ամերիկացին վարում է իւր նախնիքների, նման (որոնք գաղ-

թելով Ամերիկա՝ հետները բերած ունէին լոկ իրանց բազուկները) և դրամաղլուխ կազմելով նպաստակով, բոլորովին նման ասեստլեր'լո<sup>2)</sup>), պատրաստ է ամենայն աշխատանքի՝ կառուցանելու իւր տնակը, կարելու իւր հազուսոր, կացնով կտրելու անտառի ծառերը և բանի հարւածներով գործելու ոսկու հանքերում թող լաղթով հանդիսանալ նրա կամքը՝ նրան ինչ փոթթ թէ արդեօք առաջին ձեռնարկութիւնը լինելու է լրագրական, թէ մանրավաճառականական Ամերիկացին ընտրում է ամենաօգտակարը, ամենալարմարը, ժամանակականը Երեսկ ձեռնուու էր մի կտոր հող ցանելը, ասոր աւելի ձեռնուու է մի բան հիմնելը մի նորաստեղծ տասը տուն ունեցող քաղաքի մէջ, վաղը աւելի օգտաէտ կը լինի մի լրագրի հիմնելը, կամ մի շոգեշարժ արօրի հաստատելը, Ամենագլխաւորն ամերիկացու համար է լինել աշքաբաց, արթուն, չըթթւել միշտ միշտ գործի մէջ, գտնել և իրագործել ան մտքերը, զաղափարները, որոնք համապատասխանում են միշտ վափուտող և առաջադիմող ալս Նոր աշխարհի կեանքին, Ամերիկացին գին չի դնում երկարամեակ կրթական զարգացման, նրա խմացականութիւնը և աշխողք լաղթում են ամեն բանին, Կրաւ է ամերիկացիք ճանաչւած են գործնական, բաց նրանք ևս գործադրող իրագործող են հինգ առաջին ան մտքի, որը խելքի մօտ է լինում, — մի կատկութիւն՝ որ գուցէ աւելի գնահատելի է, քան միմիկան գործնական լինելը, Երբ սլացող մի վագոնից մի անկարգութեան պատճառով լրագիր ցրւող երեխակ էղիստոնը զուրս շպրտուեց—հինց խակոն նրա մաքովն անցաւ մի սեփական լրագիր հրասարակելը և նա իրագործեց իւր ալդ միտքը՝ անհապաղ լանձն առնելով իւր վրա թէ խաբագրութիւնը, թէ հրասարակութիւնը, թէ գրաշարութիւնը, թէ ցրւելը, թէ ծախելը մի փոքրիկ օրաթերթի Յալտնի է, որը շատ շուտով խմբագիր էղիստոնը դատի է ենթարկուում մի կնոջ կողմից, որի ընտանեկան կեանքը խախտաւակիրէն (իւր լրագիրը շատ թւով ցրւելու նպաստակով) նկարագրել էր իւր թերթի մէջ, Անհատ էղիստոնը ինքն իրան չի կորցնուած. հինց ալդ միջոցին նա մի հեռագրական դիւտ է անում և ախուռեան ինքն իրան տալիս է ելեքտրականութեանը, Եւ ասոր նա հռչակւել է՝ գիւտեր անելը... արհեստ դարձրած լինելով, մի հռչակ, որին չի կարող հասնել իւր ամբողջ համալսարանական և ալլազան կըրթութեամբ եւրոպացի և ոչ մի գիտնական:

Մի ուրիշ օրինակ, Բալգուխն'ը, որը սկզբում ոսկերիչ էր, բաց որը մինուն ժամանակ ունէր մի քանի վաճառականական մտքեր, ալա մի քանի արհեստաւորական մտքեր, — ալսօրւակ օրս դառել է, շոգեկառքեր մի խոշոր գործարանատէր մեքենագիտութեան մասին երբէք մտա-

<sup>1)</sup> =cowboy, կազմած՝ cow=կով և boy=տղակ.

<sup>2)</sup> Settler—լաղթական.

ծած շվիննելով։ Միևնուն բանը ապացուցանում են և այս անունները。 Carnegie, Burnham, Parry, Williams, Westinghouse և այլն, իսկ այն հանգամանքը թէ ինչու բոլոր ամերիկացիք, առանց բացառութեան մի մի օրինակներ չեն՝ բացատրւում է անձնական արժանաւորութեամբ, բնունողութեան բատկութիւններով, աչքաբացութեան աստիճանով, բանառութեամբ, զարմարելու ձիրքով և ալլու։ Մի խօսքով ամերիկացին իւր չաջողութիւնը իւր անձի, մէջ է դանում և իրան կապւած չի համարում ոչ անունի հետ, ոչ ծագումի և ոչ ժառանգական արհեստի, Մինչդեռ Եւրապական երր տալիս են մէկի անունը՝ դրութեան մէջ դանուզ մէկին՝ առանց իրարից բաժանելու ոչ նրա հարատութիւնը, ոչ նրա պաշտօնը և ոչ էլ նրա հասկը և ընաւորութիւնը։

Որոշ շրջանակները (բայե) և սահմանները գոլութիւն չունին Ամերիկացւում կատաների, զասակարգերի բացակալութիւնը ամելի ակնլավոնի կերեակ եթէ մտնելու լինինք մի վագոն և զննելու միջին եղած ճանապարհորդող (խակապէս՝ փոխադրուղ) հասարակութիւնը։

Թաւկշով ծածկւած նստարանների վրա լուռ, ծխախոտի տերև ծամելով նստած են մարդիկ՝ արդուկած (ութուած) կարդին ժակեսներով<sup>1)</sup>, և կորու գդակներով։ Սրանց թւում եղած վարպետները ամելի լոգնած են և աւելի ընկած երեսներով։ Մրանք ստացել են լոկ ակզենական, բայց հիմնաւոր կրթութիւն։ Իոկ գրականութեանը սրանք հետեւում են մանր, բայց տեղեակ թերթեր կարդալով։ Ահա ալս մարդկանցից են դուրս գալու միլիոնատէր բանկիրներ և երկաթուղավին թագաւորներ, Ֆիլադելֆիակի, Պիտսբուրգի, Պուլմբն-Սիտիի, Սեն-Լուիի, Ցինցինատիի ալս մշակները, որոնցից ամեն մէկը օրական 10—15—20 ֆրանկ է ստանում, ունի մի փոքրիկ տնակ՝ գորգերով ծածկւած, մէջը ջաներ, վառարաններ, բաղմոցներ, հալելներ, «ուոկին չեր»<sup>2)</sup> բոլորը՝ ինչ որ արտադրում է մեքենա-լագործութեամբ և էժան զնով։ Սրանք ունին մի ընտանեկան կեանք և սրանց կանակը չեն ընդունում գործարաններում։ Սրանց ախաղի կեանքը աւելի ևս որոշում և զարգացնում է անհատականութիւնը։ Ամեն բանում նա դառնում է պարտական միմիակն իւր անձին և ուրիշ ոչ ոքի, միմիակն իւր սեփական հեռատեսութեան և նախաձեռնութեան։ Ազատ կամքով նու գործ է բռնում մի բիլդին սոսակատի<sup>3)</sup> հետ, ինքնակամ կերպով նա փոխառութիւն է անում, առանց պարտաւորւած լինելու մի բարերարի, կամ մի բարեգործական ընկերութեան։ Ոչ մի անանց

<sup>1)</sup> Մինչև ծամսպը հասնող գեղջկակ զգեստ, jaquette.

<sup>2)</sup> Rocking chair=օրորուզ աթոռ։

<sup>3)</sup> Building society'=կառուցանող ընկերութիւն։

պատւար կամ անջրպես տիրոջ և մշակի մէջ. «Մի քիչ աւելի համարձակութիւն և—լազողութիւն ունեցող մշակը աւելի հեշտութեամբ կարող է իւր ձեռքով իրան համար մի վիճակ ստեղծել, քան թէ ազդ մշակի տիրոջ որդին»: ան աստիճան առատ է աս երկրի արտարմբութիւնը, ան աստիճան շատ է մշակ ձեռքի պահանջքը և ան աստիճան հեշտացրած է փոխառութիւնը:

Այս ակսպէս լինելով՝ ոչ ոք չի լօժարւում իրան ամելի ստոր, կախած նկատելու: Ամեն մէկը լանձն է ասնում այս ինչ գործի կատարելը ալսքանով և ուրիշ ոչինչ, նա ինքն իրան չի կապում, չի ճորտացնում՝ պալմանաւորելով ամսական 300 ֆրանկով ձեզ ծառակելու: Նա խոստանում է ձեզ ալսքան ժաման ժաման ծառակութիւն նաման ան բանին՝ երբ մէկը պատէր է ստանում այս ինչ բանը ձեզ լանձնել ալսքան օրից փառուի նոյնը և կողչ ծառակութեան վերաբերմամբ: Նա կատարում է ձեր չանձնած գործը ալսքան ժամում—ախուճնետև նա ազատ է և եթէ շարունակում է ձեզ ծառակելը՝ ազդ առժամանակեալ մի գործ է մինչև որ նա կը զանի մի ամելի ձեռնատու: Շատ լաճախ ջահել օրիորդներ ծառակութեան են մտնում ամառակ ծովալին լողարանները միմիշան իրանց հարկաւոր զրքերի արժէքը ձեռք բերելու համար: Ծառակութիւնը բնաւ ստորութիւն չի համարւում<sup>1)</sup>: Նիւռ-Էօրկի լրագրերում պատահում է կարդալ ակապիսի լաբարարութիւն, այս ջենալմեն՝ ձախորդութիւն կրկելով իւր ձեռնարկութեան մէջ և հարկաւորութիւն ունենալով 500 դոլարի՝ համաձան է ծառակութեան մտնելու—ախուճնետև նոր գործի ձեռնարկելու համար: Նոյնպէս միլիոնաէր մէկը որը իւր կարտութիւնը զնում է մի գեղասան գործում չանձնում է իւր 13 տարեկան երեխալին դեղավաճառի՝ գործի հետ ծանօթացնելու համար: Որ ուրիշը մի մեծ հանքի ձեռնարկելով իւր 11 և 12 տարեկան երեխաներին թողնում է սիդարներ և լրագրեր ծափելու: Ակսպիսով մի սերնդի լաջողութիւնը կամ ձախորդութիւնը քիչ ներդործութիւն է ունենում լստագալի վրա: Միլիոնատիրոջ և բանտրի որդիք մկան են մինուն կերպով՝ լանձւած իրանք իրանց, իրանց անհատական ուժերին, սեպհական ևոանդին, անձնական փորձառութեան: Ահա ան միակ հանգամանքը՝ որի վրա ուշագրութիւն են զարձնում ե՛ փոխ տող սեղանաւորը ե՛ մարդու գնացող աղջկը՝ Վերցրած գրաւի վրա անքան ուշագրութիւն չի դարձնում, որքան փոխ առնողի անձի վրա: Խսկական գրաւականը մարդս է և ոչ թէ հողը, որի հեկտարը, ակսպէս թէ անպէս, միակն 16<sup>1/2</sup> ֆր. արժէ: Նոյն տեսակէտով առաջնորդում է և ամերիկունին: Իրան հետամուս եղողներից, իրան փեսացու հանդիսացողներից նա նախապատառութիւն է տալիս ակապիսի մէկին, որը

1) Ինչպէս հակերիս մէջ!

իւր կարծիքով ամենաաշքաբացն է, ամենափարմարւողն է, ամենաձկունն է, ամենազօրեղն է, որի աչքերը վառվուուն են, որի քալւածքը արագ և վստան է, որի վճռականութիւնը բոպէական է, որը խստանում է լաջողութիւն, Միենողն ժամանակ ամերիկունի օրիսրդը ուշադրութեան չի առնում ոչ իւր օժիտը, որը զրօֆի է հաւասար, ոչ էլ տարիքը և կարողութիւնը իւր հօր, որը շարունակ իւր գործերը լայնացնելու, մեծացնելու, իւր հպարտութիւնը և գործելու եռանդը ամենամեծ չափով գոհացնելու մասին է մտածում:

Ամերիկացին իրան երբէք չի սահմանափակում որ և է տեղի մէջնա նողնպէս մենակ է և' Գիկագորում և' իւր հիւրանոցում և' իւր դաշտավայրերում. նա երբէք չի մտածում բնակութիւն հաստատել մի տան մէջ, որը նա կը թողնի իւր ժառանգներին, ուր կը լաւերժացվի նրա վրշատակը և ոչ էլ մտածում է իւր կեանքի օրերը հաստատուն հիմքի վրաէ դնել Արևմտեան Ամերիկացում նրա բնակատեղին թւահամարւած տախտախտակալին մի շինութիւն է, որը կարելի է ցանկացածի պէս կամ մեծացնել կամ նոյն իսկ տեղափոխելու Նթէ ալդ անակը կալրկի—ադր կը լինի ակսքան դոլլարի մի կորուտ՝ և ուրիշ ոչինչ. Յօր բաւական է հնի նմանը մի նորը կառուցանելու (աւելի ուղիղ սսած՝ կաղմնելու) համար. Ամերիկացու համար, ասում է de Rousiers'ը Հոմը<sup>1)</sup>, օջազը է ան ունզը, ուր որ նա գտնուում է աս իսկ բոպէին, բայց որի տէրը, իշխանը ինքն է» և ուր նա պաշտպանւած է զրաի ամեն մի շոշափումից, լարաբրւութիւնից. Եւ ամերիկացին ոչինչ աշնքան դրափիչ և ախորժիսելի չի գտնում, քան երբ նա վերադառնում է զրասենեակից ընկնում իւր ռուսին չեղի մէջ օրորւում, ոսները դնելով բուխարու բրակ և եղանակում. Իսու, տաք հօտե, ալինքն՝ ինչքան լաւ է չը լինել ուրիշների ալլ իրա մօտ:

Ամերիկացուն օտար են եւրոպական ան տիպերը (մանրավաճառի, գործակաստարի և ալլն), որոնք ճակատագրական հաստատութեամբ իրանց ամբողջ կեանքը սահմանափակում են որոշ շրջանակներում, որոշ գործողողութիւններ կատարելով մինչև կեանքի վախճանը. Ամերիկացին ունի մի առաջնորդող իդէալ, որին նա ձգտում է հասնելու և ալդ իդէալն է՝ ապացուցանելու որ մարդս տէր է զործելու զօրութեան ամենամեծ չափին,—զօրութեան, որը ակտեղ, Ամերիկացում արժանաւրութիւն է կազմում մարդու համար. Դիցուք կրծքալ մի հիւանդ միլիոնատէր ձմեռը անցնում է Ֆլորիդալում. Ճաշին նա տեղեկանում է իւր սեղանակիցներից թէ մի ինչ որ հանք բարձի թողի է արւած. իսկողն նա համաձայնութիւն է կալացնում, կապում պալմանը և ահա մի նոր զործ ծնունդ է առնում.

1847 թւին Ամերիկացում լիշտում էր միան՝ մի մարդ, որի կարտու-

<sup>1)</sup> Իսու—տուն, հալրենիք, օջաղ.

թիւնը հասնում էր 25 միլիոն ֆրանկի։ Այսօր դրանց թիւը հասնում է հազարների—հետևեալ ցուցակի համաձաւն։

250	հոգի	ունին	100	միլիոն	ֆր.	ուրեմն	մօս	25 միլիարդ
500	"	"	50	"	ֆր	մինչև	100 միլ.	25 "
1,000	"	"	25	"	"	"	50 "	25 "
2,500	"	"	$12\frac{1}{2}$	"	"	"	25 "	31 "
7,000	"	"	5	"	"	"	$12\frac{1}{2}$ "	35 "
20,000	"	"	$2\frac{1}{2}$	"	"	"	5 "	50 "

31,250 հոգի տէր են առնւազն

191 միլիարդ

Փրանկի կամ ուրիշ խօսքերով երեք հինգերորդականին ամերիկական ամբողջ հարատութեան, որը գնահատում է քիչ աւելի քան 300 միլիարդ ֆրանկ։

Այդ աղիւսակը լրացնելու համար գնենք նաև հետևեալ անունները իրանց կարողութիւններով։

Նոր վախճանւած Ֆէ. Գուլդ՝ 350 միլ. ֆր. Rockafeller՝ նորնքան Բլայն՝ նորնքան, Ստանդփորդ, Հեօնախինգտոն, Լառնեջի, Կոկս, Դրեկսել—ամեն մէկը 250 միլիոնով և ավելի Սական շարունակենք։

Ամերիկացին չի ստեղծում իւր համար որոշ սահմաններ, չի բաւականանում իւր դրութեամբ, չի ձուլում մի կազմապարի մէջ։ Նա անընդհատ աշխատում է, և եթէ նա բանում է մի հանքի մէջ՝ նա հաւատում է որ հանքի իւր մշակած երակը ամենախորն է և ամենահարուստը, այդ հաւատը, այդ եռանդը, այդ սէրը, այդ հազբենասիրութիւնը ն, ան գարձնում են մի հաւատարիմ պաշտօնեալ, մի կատարեալ ճշգրիտ մեքենակը Առաւատեան զարթնելիս նա կուլ է տալիս իւր նախաճաշիկը, ամսնում» իւր շորերի մէջ, և ՝Ակախելով» ձիաքարչից հասնում կամ դրասենեակը, կամ արհեստանոցը և ակտեղ կատարածը լինում է, բայ վիճակագրական թիւրի, առաւել՝ քան Անզլիալի, Բելլիալի, Ֆրանսիալի բանտորի արածը, Ամերիկացի բանտորը գերազանցում է բոլոր մշակներին իւր ուշիմութեամբ, իւր շարժածքների արագութեամբ, ճշտութեամբ և, չընալած նրա վարձի թանգութեան, նրա արտադրածը աւելի էժան է նասում քան Եւրոպակի մշակների մեռքով կատարածը։ Եւ նկատած է, որ ամերիկացի բանտորը կանոնաւոր բանելով հանդերձ՝ չի շատապում, ուստի և չի փափրում և չի քրթնում։ Եթէ պատահում է մի արգելք իւր ուժերից վեր—նա կանդ է առնում տուանց վատնելու իւր զօրութիւնը։ Եւ երբ ամերիկացի մշակը հանգստանում է—նա հանգստանում է կարգին, ամսով շարունակ հիւրանոցում ֆեալով։ Նա չի բացում իւր ստացած նամակները և ոչ էլ լրացիր կարգում։ լուս, անխօս նա պառկում է թիկնաթոռի մէջ՝ փակելով իւկ իւր աչքերը։ Ձիշտ մեքենալի պէս, որը կամ գործում է, կամ միանգաման դադարում առանց միջանկեալ կիսագործ դրութեան։

Ակսպիսով երեք պատճառներ նպաստում են ամերիկական ալս ովհպարի զարգանալուն՝ և հաստատելուն, Գրանք են. 1) ժառանգականութիւնը, որի հիման վրայ ամեն մի ամերիկացի ունեցել է ալնախիսի մի նախնի, որը ինքն է կուել իւր բազզը, իւր զիրքը իւր բազուկներավ և իւր մասաւր կարողութեամբ. 2) բնական ընտրականութիւնը, որի հիման վրայ առաջ է գնում միմիախն աւելի զօրեղը՝ աւելի ձևանը, աւելի չարմարողը և 3) սեռական ընտրականութիւնը—քանի որ ամերիկունի օրիորդները տղամարդկանցից սակաւաթիւ լինելով Արևմտեան Ամերիկակառում ընտրութիւն են անում և նախապատռութիւն տալիս միմիախն աչքաբացին և լածողութիւն ունենալու ընդունակին:

Կրթութիւնը իւր կողմից նպաստում է էլի ակդ շաստով, Գրեթէ մանկութիւնից ամերիկացի երեխան հեռացնում է իւր մօրից, Նա չվ խնամսամ քնքացնող, հոգացող և հսկող մթնոլորտի մէջ, 14 տարեկան հասակում նա աղատ է, և իւր ծնողները ոչ պարտաւորութիւն և ոչ էլ իրաւունք ունին նրա վրայ, Նրանք չեն մոտածում նրա մասին հոգալու, նրա համար արհեստ ընտրելու, նրան օժանդակելու, կամ պսակելու Հարուստի և չքաւորի որդիքը աշալիսով սովորում են կռւել, զուրս պլծնել և կարմար առիթ որոնել ու գտնել, երկուսն էլ կազմում են իրական փորձի ուղղակի ներգործութեան տակ, և եթէ հարուստի որդին ժառանգում է իւր հօր հարստութիւնը—նա արդէն ընտելացած է լինում գործին և հօր թողած կարողութիւնը ծառալում է որգուն իրքն լծակ աւելի խոշոր ձեռնարկութիւնների համար, Բոլոր հանգամանքները նպաստել և զարգացրել են պատճառն առաջ բերելու իւր կամքը, իւր վճռականութիւնը, սուարացնելու իւր դրական զիտութիւնների պաշարը և նրբացնելու իւր չարմարելու ձիրքը, Ակսպիսով 17 տարեկան պատճանին գործի և զործելու համար արդէն պատրաստ մի տղամարդ է հանդիսանում Ամերիկակում:

## III

Բայց լսենք մի ամերիկացու<sup>1)</sup>, որը նւրոպակից ետ դառնալով պատճում է իւր ճանապարհորդութեանմասին, Նա հրճանքով է խօսում Պարիզի իսաղաղ փողոցների և նրա ընակիշների անհոգութեան և զոհունակութեան մասին, Գիւղում մշակելու աւանդական ձեռ, երկրադրուկան գործիքները իրան հետաքրքրում են իրքն հնութեան մի վաերազգիր ճիշտ անպէս՝ ինչպէս նգիպասուի մի սովորութիւն, կամ արօրի մի բեկոր Հոմերոսի կամ Վերգիլիոսի ոտանաւորները մեղ վիշեցնող Նա խկոն մոտածում է իւր հակրենիքի և ախտեղի լաճածաւալ կալւածքների մասին, կատարելագործւած երկրագործական գործիքների և մամութալին շէնքեւ.

<sup>1)</sup> The American—par H. James.

րի մասին, Զիկագովի 60 երկաթուղավին կալարանների և հոկաէ նաւերի մասին, այն նոր արևոտազիտութեանը, որը կառուցանել կարողացաւ Բիստիլինի հակալական կամուրջը Հուզունի վրացով, որը Պիտարուրդի մօտերքին լուսաւորում է գիշերի խաւարը ձուլարանների, վառարանների կրակների հետ և օդը բացավառում է ծխող ձողաւոր ջաների պէտ և այս լանչածաւալ գործարանների մօտ, ուր մեքենավի կողի և միորինակ գործողութեամբ պատրաստում են հազարաւոր օրինակներ այն բոլոր իրերի, որոնք անհրաժեշտ են մարդու համար՝ նրա հագնելիքը, ուստի ամանը և նրա աները—արգեօք գործելու եւրոպական ձեւ համեմատութեամբ ամերիկանինի հետ չք վշիցնում ասիականին, Զինացի և հնդիկ արհեստաւորի նման եւրոպացի մշակը բանում է էժան, եւրոպացու նման որը իւր պղնձեղէնը ստանում է Քենարէսից, իսկ վղոսկը և նապոնիալից—Ամերիկացին ստանում է Եւրոպացի նկարներ, կանանց շորեր, ձեռնոցներ, մի խօսքով ալճակիսի բաներ՝ որոնք պահանջում են առանձին խնամք, իրեր՝ որոնք պահանջում են շինողի կողմից մի տեսակ նախաձեռնութիւն, ճաշակի, տաղանդ և համբերութիւն, Ալսպէս, ամերիկացու կարծիքով, եւրոպացու կտորարածը չնշին է, աննշան է և ինքը եւրոպացին—անշարժ, մի ժառանգական կաղապարի մէջ ձուլւած, սառած, ժողովուրդը նրան թւում է մի տգէտ ամբոխ, իսկ բուրժուազիան՝ անկարող մոնելու կեանքի, մէջ առանց մի տեսակ քրմութեան ենթարկելու, առանց նախապարաստական բազմաթիւ տեսական և աւանդական կրթութեան, բոլոր մտաւոր կարողութիւնը, ընդունակութիւնը սպառւելուց վետով, նման երիտասարդ թրանմին, որի կրթութիւնը աւարտում էր նրա 36 տարեկան՝ հասակում: Ամեն ինչ բարքու վարքեր, արդիւնագործութիւն, կրթութիւն ամեն ինչ պարզ ցուց են տալիս ամերիկացուն, որ նա արևելքումն է—կաստանների մի երկրու, ուր նախնիքը պատւի մէջ են, զերդաստանները ուժեղ, բարձրագիր զասերը հեշտասէր, սառին ժողովուրդը թշւառ, արարդութիւնները, ծէսերը զօրաւոր, աէրութիւնը ամենակարող, մարզաւութիւնները, ծէսերը զօրաւոր, աէրութիւնը ամենակարող, մարզաւութիւնների, հաշուած իւր մթնոլորտի հետ, կաշկանդած իւր ուրոնի թերի զարդացման մէջ աւանդութիւններով և նախապաշարութեներով, որոնք նրան կապում են անցած-գնացած սերունդների հետ, որոնց նա պորտական է և իւր աստիճանը և իւր գոլութիւնը:

Զեմու ամերիկացու այս կարծիքները միան մասամբ են իրաւացին, Առանց մանրամանութիւնների մէջ մոնելու, ակսքանը միան կարելի է ասել, որ ամերիկական հռչակւած նախաձեռնող ողին, գործելու սուանդը, տոկունութիւնը, չամառութիւնը և ալզ չեն սահմանափակւում բացառապէս նոր աշխարհով—ալ ալդ լատկութիւնների հաղարաւոր օրինակներ կարելի է զանել նաև հին աշխարհի ամեն մի երկրում Անգլիակում, Ֆրանսիակում, Գերմանիակում և ալզ, Վերջապէս միթէ ալսօրւակ ամերիկացի-

ները երեկւակ գաղթականները չեն հին աշխարհից, ուր նրանք տէր էին նոյն ոգու, բայց որը սական հասրաւորութիւն չէր գտնում իրան լատանի կացուցանելու իւր ամբողջ զօրութեամբ և հէնց որ լատանեց զործելու ասպարէզ—ալդ նախաձեռնող ողին թափ տմց իւր թեսերը և եռանդի ու տոկունութեան ապացուցներ տմց արդիւնագործութեան ամեն մի ճիւզում Անհամաժեշտ էր միախն արգաւանդ հող—ալդ հողը եղաւ նոր աշխարհը և հին աշխարհից Ամերիկակ եկողները ախօրւան օրս արդէն չափից դուրս բարձրից են նալում իրանց հին հարենիքի վրաւ ։ Ամերիկացիներու լիքն են Սւրոսակում—միախն թէ հին աշխարհը իրաւ որ ունի առանձին պահանջներ չնորհիւ իւր պատմութեան և հէնց այդ կապերի բացակալութեան շնորհիւն է, որ նոր Աշխարհում հասսաւած եւրոպացիները առելի բաղդաւոր դրութեան մէջ են ալդ կոզմից, քանի որ հնարաւորութիւն ունին նոր հիմունքների վրա ։ հաստատել իրանց նոր հապենիքի կազմակերպութիւնը։

Ոչ կարմրամորթ, ոչ էլ սեամորթ Ամերիկալին են պարտական ալժմեան ամերիկացիները իրանց ներկաւ քաղաքակրթութեամբ, ազ միմիախն հին Սւրոսակին, որի հաւաքական քաղաքակրթութեան հետևանքն է միախն Ամերիկակի ներկաւ քաղաքակրթութիւնը, կարելի է միախն ասել որ եանիլիների մեծամտութիւնը, ինքնանաւանութիւնը առաջ է եկել չնորհիւ անդադար լաջողութեան և որ նրանք ալդ դեռ շարունակուղ լաջողութիւններից շացած՝ իրանց թնջ ասես չեն կարծում։

Ֆ.

(Կը շարունակուր)